ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/271

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.10.2021թ. թիվ 26/26-1/16959-2021 գրությամբ Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ջրային կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.10.2021թ. թիվ 03/17/4137-2021 գրության հիման վրա 18.10.2021թ. թիվ 26/26-1/16959-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/271 ընթացակարգի շրջանակներում 21.10.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ջրային կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ջրային կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.10.2021թ. թիվ 03/17/4137-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ ներկայացնում եմ Ջրային կոմիտեի կարիքների համար «Արփա-Սևան» ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերազինման ու արդիականացման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի մասնակից Արմեն Ռոբերտի Դարբինյան ԱՁ-ի վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.09.2021թ. թիվ 2 որոշմամբ արձանագրել է Արմեն Ռոբերտի Դարբինյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա թերությունները և համաձայն ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակիցներին առաջարկել՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը 23.09.2021թ. թիվ 3 որոշմամբ արձանագրել է, որ սահմանված ժամկետում Արմեն Ռոբերտի Դարբինյան ԱՁ-ի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել (ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով հրավերով սահմանված փաստաթղթերը չեն ներկայացվել) և ընկերության հայտը մերժվել է:

Կից ներկայացնում եմ ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8 ծածկագրով ընթացակարգի մասնակից Արմեն Ռոբերտի Դարբինյան ԱՁ-ի ներկայացրած հայտը և գնահատող հանձնաժողովի որոշումները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/271 ընթացակարգի շրջանակներում 21.10.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ ջրային կոմիտեի կողմից իր կարիքների համար հիդրոմեխանիկական կառույցների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի հայտում արձանագրելով անհամապատասխանություններ, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 22.09.2021թ. ժամը 18:00-ն շտկել անհամապատասխանությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի հայտը մերժելու վերաբերյալ՝ հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխանության հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.10.2021թ. թիվ 26/26-1/16959-2021 գրությունը, ՀՀ ջրային կոմիտեի 08.10.2021թ. թիվ 03/17/4137-2021 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում

հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,*** իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,</u>*** իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Այսպես, ՀՀ ջրային կոմիտեի կողմից իր կարիքների համար հիդրոմեխանիկական կառույցների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի հայտում արձանագրելով անհամապատասխանություններ, որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 22.09.2021թ. ժամը 18:00-ն շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի հայտը մերժելու վերաբերյալ՝ հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխանության հիմքով:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, <u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,</u> իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝

<u>1.Նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով:</u>

<u>2. Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:</u>

(…)

<u>7. Օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:</u>

8. ***<u>եթե ժամկետի ավարտը պայմանավորված է վրա հասած իրադարձությամբ, ապա այն ավարտված է համարվում վրա հասած իրադարձության օրվան հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի ավարտը:</u>***

<u>Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:</u>

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նման պայմաններում, այն է՝ ***17.09.2021թ.*** նիստի ընթացքում Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանի հայտում ***արձանագրելով անհամապատասխանություններ*** և վերջինիս առաջարկելով ***մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 22.09.2021թ. ժամը 18:00-ն շտկել անհամապատասխանությունները, խախտել է վերը շարադրված իրավական նորմերով սահմանված պահանջները և չի պահպանել անհամապատասխանությունները շտկելու նպատակով Մասնակցին մեկ աշխատանքային օր ժամկետ տրամադրելու կարգը, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել է Մասնակցի կողմից իր իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունը:***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.10.2021թ. թիվ 26/26-1/16959-2021 գրությամբ Ա/Ձ Արմեն Ռոբերտի Դարբինյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**